Rouben Mamoulian (1897-1987) was one of the most influential, yet overlooked, American artistic visionaries of the 20th century. Mamoulian’s revolutionary ideas and techniques brought important contributions to the early development of American musical theater and film. In his artistic productions, the director combined song, dance, dramatic action, dialogue, and rhythm to create a stylistic unity. In film, Mamoulian restored mobility to the camera; introduced multi-track sound recording and voice-over; redefined close-ups, split-screens, and dissolves; and directed the first full-length feature film shot in color, using the new Technicolor process. This pre-

sentation will explore some of the life experiences of Mamoulian and will focus on the director’s Armenian heritage as it relates to his art.

Milena Oganessian, PhD, specializes in cultural heritage and identity studies. Milena has presented in the United States, Canada, Georgia, and Armenia. She has taught internationally and has consulted for governmental and non-profit organizations, including the Smithsonian Institution and the Armenian American Cultural Association, Inc., in the Washington, D.C., area. She is a recipient of numerous awards and grants, including a research grant from the Knights of Vartan Fund for Armenian Studies and the National Association for Armenian Studies and Research (NAASR) and P.E.O.’s International Peace Scholarship, among others. Milena has worked as a translator; she speaks Armenian, Russian, Georgian, and Turkish.

This program will be accessible on Zoom (register at <https://bit.ly/NAASRMamoulian>) or on YouTube at <https://www.youtube.com/c/ArmenianStudies>, where it will remain available after the event.

## Armenian Government Acquires

Continued from page 1

quoted as saying.

The statement gave no clear reason for Trotsenko’s lavish donation to the government. Nor it did specify from whom the Russian company purchased the majority stake in ZCMC.

The Armenian mining giant employing some 4,000 people is based in Kajaran, a small town in southeastern Syunik province. A German metals group, Cronimet, officially owned 75 percent of its stock for many years. The rest of the company belonged to two obscure Armenian firms.

ZCMC’s ownership structure changed significantly but remained opaque after Cronimet reportedly sold its controlling stake in 2019. A former senior Russian government official, Mikhail Zurabov, became one of its new minority shareholders.

ZCMC was believed to be controlled until recently by a group of individuals that included former Syunik

Governor Vahe Hakobyan, a senior member of the opposition Hayastan alliance led by former President Robert Kocharyan.

Campaigning for the June 20 parliamentary elections, Pashinyan pledged to crack down on ZCMC’s corrupt shareholders and make sure that their shares are returned to the people. He accused the ZCMC management of banning workers from attending his campaign rally in Kajaran.

“The Zangezur Copper-Molybdenum Combine, you have crossed the red line, which means that this blue hammer will first smash your heads,” the prime minister declared during that rally. “Whatever you say, your fate is sealed, you just quietly wait for your verdict.”

In July, masked officers of Armenia’s National Security Service (NSS) repeatedly searched ZCMC’s offices and detained three company executives. At least one of them remains under arrest.

## “Bureaucrats of the Armenian Genocide: The Mid-Level Perpetrators” by Dr. Suren Manukyan

**“Bureaucrats of the Armenian Genocide:  
The Mid-Level Perpetrators”**  
by Dr. Suren Manukyan  
*Kazan Visiting Professor, Fresno State*  
Friday, October 15, 2021 • 7:00PM  
**Virtual Presentation**  
**Zoom registration:**  
<https://bit.ly/armenianstudiesmanukyan2>



FRESNO — Dr. Suren Manukyan, Kazan Visiting Professor in Armenian Studies at Fresno State, will speak on “Bureaucrats of the Armenian Genocide: The Mid-Level Perpetrators” at 7:00PM (Pacific time) / 10:00PM (Eastern time) on Friday, October 15, 2021. The presentation is part of the Fall 2021 Lecture Series of the Armenian Studies Program and will be an online presentation. Zoom registration is required: <https://bit.ly/armenianstudiesmanukyan2>.

This is the second of a three-part series of presentations by Dr. Manukyan on the Armenian Genocide. His final presentation on “Ordinary Killers of the Armenian Genocide: The Lower-Level Perpetrators,” will be given on Friday, November 12, 2021.

The second level of genocide perpetrators encompasses structures, which are directly involved in regulating the Genocide following the directives of top authorities, and ensuring the implementation of those instructions. The role of the structures or the

state bureaucracy on this level was remarkable. The local bureaucracy would greatly precondition the nature and the intensity of genocide. Local elites could intensify or slow down the dynamics of killings. Dr. Manukyan will discuss these factors in his presentation.

Dr. Manukyan is the Head of the UNESCO Chair on Prevention of Genocide and Other Atrocity Crimes at Yerevan State University and Head of the Department of Comparative Genocide Studies at the Armenian Genocide Museum-Institute (Yerevan). He is also a Visiting lecturer at the American University of Armenia and has been a Fulbright Scholar at the Center for the Study of Genocide and Human Rights at the Rutgers University of New Jersey.

For information about upcoming Armenian Studies Program presentations, please follow us on our Facebook page, @ArmenianStudiesFresnoState or at the Program website, <https://fresnostate.edu/armenianstudies>.

## Pandora Papers Expose Aliyev and His Family

Continued from page 1

Aliyev’s son, Heydar, owned four buildings in London’s Mayfair district when he was just 11 years old.

A \$44.7 million block was bought by a front company owned by a family friend of the president in 2009 and was transferred one month later to Heydar.

Aliyev’s administration did not respond to requests for comment on the allegations, nor did members of his family.

The publishing of the Pandora Papers comes five years after the explosive

Panama Papers investigation in 2016.

The ICJ obtained the trove of nearly 12 million confidential files from 14 financial services companies in countries such as the British Virgin Islands, Panama, Belize, Cyprus, the United Arab Emirates, Singapore, and Switzerland that set up shell companies and other nooks for clients.

A team of more than 600 journalists from 150 news outlets spent two years sifting through them, tracking down sources, and digging into court files and other public records from dozens of countries.

## Armenian-American Ardem Patapoutian

Continued from page 1

son said.

Thomas Perlmann, the secretary general of the Nobel Assembly, said the discovery “unlocks the secrets of nature ... It explains at a molecular level how these stimuli are converted into nerve signals. It’s an important and profound discovery.”

The starting point for the pair’s groundbreaking discoveries was Julius’ work with the humble chili pepper — or more specifically, capsaicin, the pungent compound that causes a burning sensation when we eat the peppers.

Patapoutian was born in Beirut,

Lebanon, he earned his doctorate in biology from the California Institute of Technology in 1996 and joined the Scripps Research faculty in 2000 after completing a postdoctoral fellowship at University of California, San Francisco.

In 2017, he was named to the National Academy of Sciences. He has received many other honors and awards spanning two decades, including the 2019 Rosenstiel Award for Distinguished Work in Basic Medical Research (also with David Julius). In addition to his work at Scripps Research, Patapoutian serves as an investigator at the Howard Hughes Medical Institute.



### ՀՀ Դեսպանութիւնում Կայացաւ Ընդունելութիւն Նուիրուած Անկախութեան 30-Ամեակին



Սեպտեմբերի 30-ին ԱՄՆ-ում ՀՀ դեսպանութիւնում կայացաւ ընդունելութիւն՝ նուիրուած Հայաստանի Հանրապետութեան անկախութեան 30-ամեակին, որին ներկայ էին ԱՄՆ պետքարտուղարի՝ քաղաքացիական անվտանգութեան, ժողովրդավարութեան, մարդու իրաւունքների հարցերով տեղակալ Ուզրա Չեյեան, կոնգրեսականներ Ֆրենք Փալոնը, Ջեքի Սփիրը, Պետքարտուղարութեան եւ այլ պետական կառույցների պաշտօնեաներ, Ուաշինգթոնում հաւատարմագրուած դեսպաններ, դիւանագիտական կորպուսի ներկայացուցիչներ, ռազմական կցորդներ, Հայ Առաքելական եկեղեցու եւ ամերիկահայ համայնքի ներկայացուցիչներ:

Ընդունելութեան սկզբում ներկաները մէկ ըոպէ լուծեցին յարգեցին արցախեան երկրորդ պատերազմի հետեւանքով գոհուած գիւնուորների եւ քաղաքացիական անձանց յիշատակը:

Այնուհետեւ դեսպան Մակունցն իր ելոյթում անդրադարձ կատարեց անկախութեան երեսուն տարիների ընթացքում Հայաստանի առջեւ ծառայած մարտահրաշխներին եւ արձանագրուած ձեռքբերումներին՝ առանձնապատուկ կարեւորելով վերջին տարիներին ժողովրդավարական արժէքների ամրապնդումը Հայաստանում:

Դեսպանը կարեւորեց Լեւոնային Ղարաբաղի հիմնահարցի՝ ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահութեան շրջանակներում վերջնական

կարգաւորումը՝ հիմնուած ազգերի ինքնորոշման սկզբունքի վրայ: Նա նաեւ իր երախտագիտութիւնը յայտնեց ամերիկեան կողմին՝ այս տարուայ Յունիսին 15 հայ ռազմագերիներին հայրենիք վերադարձնելու ուղղութեամբ գործադրած միջնորդական ջանքերի համար:

Ելոյթում շեշտադրուեցին նաեւ երկկողմ յարաբերութիւնների առաւել ամրապնդմանն ու խորացմանը միտուած քայլերը՝ հայ-ամերիկեան ռազմավարական երկխօսութեան շրջանակներում:

Պետքարտուղարի տեղակալ Ու. Չեյեան իր ուղերձում անդրադարձաւ 44-օրեայ պատերազմին՝ ցաւակցելով զոհերի ընտանիքներին եւ ընդգծելով ռազմագերիների ու զերեկարուած այլ անձանց վերադարձի անհրաժեշտութիւնը: Նա կարեւորեց Լեւոնային Ղարաբաղի հակամարտութեան վերջնական կարգաւորումը՝ ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահութեան շրջանակներում: Տկն. Չեյեան անդրադարձաւ նաեւ Հայաստանում ժողովրդավարութեան զարգացմանը՝ այս համատեքստում կարեւորելով վերջին շրջանի ձեռքբերումները:

Կոնգրեսի՝ հայկական հարցերով յանձնախմբի համանախագահներ Փալոնն ու Սփիրը խօսեցին երկու երկրների միջեւ առկայ յարաբերութիւնների ակտիւացման, Արցախեան հիմնահարցի վերջնական կարգաւորման մասին՝ կարեւորելով միջխորհրդարանական համագործակցութիւնը:

### ՀՀ Անկախութեան 30-Ամեակին Նուիրուած Միջոցառումը Տեղի Ունեցաւ Ֆրեզնոյում



Սեպտեմբերի 20-ին Լոս Անճելոսում ՀՀ գլխավոր հյուպատոս, արտակարգ եւ լրագոր դեսպան Արմէն Բայբուրդեանը մեկնեց Ֆրեզնո՝ մասնակցելու ՀՀ անկախութեան 30-ամեակին նուիրուած միջոցառումներին:

Սեպտեմբերի 21-ի առաւօտեան դեսպան Բայբուրդեանը մասնակցեց Ֆրեզնոյի մարզի կառավարիչների խորհրդի նիստին, որի ընթացքում խորհրդն ընդունեցին հռչակագիր՝ շնորհաւորելով հայ ժողովրդին անկախութեան յօբելեանի կապակցութեամբ: Միջոցառման բացումն աղօթքով կատարեց Հայ առաքելական եկեղեցու Արեւմտեան Ամերիկայի թեմի առաջնորդ Բարձրաշնորհ Տէր Թորգոմ եպիսկոպոս Տօնոյեանը: Ներկայ էին հոգեւորականներ Տէր Հայր Եսայի Պետրոսեանը՝ որպէս Հայ առաքելական եկեղեցու Արեւմտեան Ամերիկայի թեմի առաջնորդ Գերաշնորհ Տէր Յովնան արքեպիսկոպոս Տէրտէրեանի ներկայացուցիչ, Հայր Սուրբ Աշոտ Պաշտուրեանը եւ Ֆրեզնոյում ՀՀ պատուաւոր հիւպատոս Պերճ Աբգարեանը:

Միջոցառման ընթացքում դեսպան Բայբուրդեանը հանդէս եկաւ ելոյթով: «Խորհրդանշական է, որ Հայաստանի Անկախութեան 30-ամեակը նշում ենք Ֆրեզնոյում, որ Գալիֆօրնիայի եւ ԱՄՆ ամբողջ արեւմտեան ափի հայ համայնքի ծննդավայրն է: 19-րդ դարի երկրորդ կեսին հայերը սկսեցին հաստատուել Ֆրեզնոյում՝ գալով Մասաչուսեթսից եւ Արեւելեան ափի այլ նահանգներից: Եւ այստեղից է սկիզբ առել հայահոծ համայնքը՝ իր աւանդութիւններով, ամուր կառույցներով, մշակութային ու հոգեւոր արժէհամակարգե-

րով», իր ելոյթում ասաց գլխավոր հիւպատոսը: Դեսպան Բայբուրդեանն նաեւ իր գնահատանքի խօսքն ուղղեց Ֆրեզնոյի մարզի կառավարիչների խորհրդի անդամներին, որոնք անցեալ տարուայ Հոկտեմբերին բանաձեւ ընդունեցին՝ Արցախի դեմ պատերազմական բռնութիւնները դատապարտող:


Նոյն օրը միջոցառման մասնակիցներն այցելեցին հայ ազգային էպոսի հերոս Սասունցի Դաւիթ արձանին, որը Ֆրեզնոյի տեսարժան վայրերից մէկն է:

Սեպտեմբերի 21-ի երեկոյեան դեսպան Բայբուրդեանը տիկնոջ՝ Իվետ Բայբուրդեանի հետ մասնակցեց ՀՀ անկախութեան 30-ամեակին նուիրուած միջոցառմանը, որը կազմակերպել էր Ֆրեզնոյում ՀՀ պատուաւոր հիւպատոս Պերճ Աբգարեանը: Հանդիսաւոր միջոցառմանը մասնակցում էին առաջնորդներ Գերաշնորհ Տ. Յովնան արքեպիսկոպոս Տէրտէրեանը, Բարձրաշնորհ Տ. Թորգոմ եպիսկոպոս Տօնոյեանը, հոգեւոր դասի ներկայացուցիչներ՝ ներառեալ Հայ Աւետարանական եկեղեցու, Գալիֆօրնիայի ու Ֆրեզնոյի մարզի ընտրուած պաշտօնեաներ, այլ երկրների գլխավոր հիւպատոսներ, ճանաչուած համալսարանների նախագահներ: Գլխավոր հիւպատոս, դեսպան Բայբուրդեանը եւ պատուաւոր հիւպատոս Պերճ Աբգարեանը յատուկ հռչակագրեր յանձնեցին՝ պատրաստուած ԱՄՆ կոնգրեսական Ջիմ Կոստայի, Գալիֆօրնիայի նահանգային սենատոր Անդրէաս Բորջեսի, Ֆրեզնոյի պետական համալսարանի նախագահ Սաուլ Յիմենեզ-Սանդովալի եւ տեղական Համայնքային առողջապահական համակարգի նախագահ Կրեգ Կաստրոյի անուններով:

### Խաչքարի Օծում Նուիրուած Արցախի Ազատամարտի Զոհուած Հայ Զինուորներուն

Կիրակի Հոկտեմբեր 3, 2021, պատմական իւրայատուկ օր մըն էր Լոս Անճելոսի եւ շրջակայքի հայութեան համար, ուր յատուկ յիշատակութեամբ նշուեցաւ Արցախի 44 օրուան պատերազմի նահատակները: Արդարեւ, Պըրպէնքի Սրբոց Ղեւոնդեանց առաջնորդանիստ մայր տաճարը կարծէք ժամադրավայրը եղած ըլլար տարբեր տեղերէ ժամանած հայերու համար:

Այս առթիւ հանդիսաւոր պատարագ մատոյց Հայաստանեայց Եկեղեցուց Արեւմտեան թեմի առաջնորդ՝ Գերշ. Տ. Յովնան Արք. Տէրտէրեան: Երգեցողութիւնը կատարուեցաւ «Շնորհալի» երգչախումբին կողմէ: Պատարագին ներկայ էին նախկին առաջնորդ Գերշ. Տ. Վաչէ Արք. Յովսէփեան, Լոս Անճելոսի



մօտ Հայաստանի աւագ դեսպան հիւպատոս Տիար Արմէն Բայբուրդեան իր տիկնոջ հետ, ինչպէս նաեւ տարբեր կազմակերպութեանց ներկայացուցիչներ: Պատարագիչ սրբազան հայրը իր

բարոզին մէջ յատուկ անդրադարձ ունեցաւ Արցախի ազատամարտին զոհուած զինուորներու հայրենանուէր ծառայութիւններն ու զոհաբերութիւնը, մեր պապենական սուրբ հոգեւոր պաշտպանութեան գոյամարտին մէջ, հանդիսանալով տիպար օրինակներ իրաւ հայրենասիրութեան:

Արցախի 44 օրուան պատերազմին նահատակուած հայ զինուորներու յատուկ հոգեհանգստեան արարողութեան նախագահեց Գերշ. Յովնան Սրբազան: Այնուհետեւ հոգեւորականներու եւ դպիրներու թափօրն ուղղուեցաւ դէպի եկեղեցուց հարաւային դարպասը, ուր տեղի ունեցաւ խաչքարի հանդիսաւոր

օծման արարողութիւն, նուիրուած արցախեան զոհուած ազատամարտիկներուն: Խաչքարի բարերարն էր Կարէն Սարկաւազ Վարդանեան: Այստեղ եւս ելոյթներով հանդէս եկան Գերշ. Յովնան Սրբազան եւ հիւպատոս Արմէն Բայբուրդեան, որոնք ոգեկոչեցին մեր պանծալի ազգի սերունդը կազմող նահատակներու անմեռ յիշատակը նաեւ շնորհակալութիւն յայնելով խաչքարի նուիրատու բարերար Կարէն Վարդանեանին: Աւարտին՝ խաչքարի մօտէն թուիչք առին տասնեակ մը սպիտակ աղաւնիներ, ի նշան խաղաղութեան:

Միջոցառումը վերջ գտաւ «Մեր Հայրենիք» խմբերգով:



# Փասատենայի Հայկական Ծննդարանը Տօնեց Հայաստանի Անկախութեան 30ամեակը



20 Սեպտեմբեր 2021, Երկուշաբթի օր Փասատենա քաղաքի Պլեյր վարժարանի նորաբաց Հայկական ձեմարանը տօնեց Հայաստանի անկախութեան 30ամեակը:

Աշակերտական հոգեշնչող յայտագիրը սկսաւ երկու սկաուտներ՝ ձուլիլըն Շահոյեանի եւ Յակոբ ձապուրեանի կողմէ կատարուած դրօշակի արարողութեամբ: Երբ հայկական եռագոյնը հանդիսապէս մտաւ սրահ՝ միաբերան կատարուեցաւ վերանկախացած Հայաստանի պետական քայլերգը:

Ապա սկսաւ յայտագիրը, որուն հանդիսավարն էր ձերմարանի դադու թալիս յարաբերութիւններու ներկայացուցիչ Թալին Նազարեանը: Բացման իր խօսքի մէջ ձեմարանի վարիչ Նորայր Տատուրեանը շնորհակալութիւն յայտնեց վարժարանի տնօրէնութեան՝ յայտագրի իրականացման համար իրենց ցուցաբերած աջակցութեան եւ խանդավառ ներկայութեան համար:

Ապա բեմ եկան ու Հայաստանի Հանրապետութեան պատմական ներկայացուցիչն աւարտական դասարանի աշակերտուհի Ալբին Ֆրիասը եւ 11րդ դասարանի աշակերտուհի Սօֆի Եուսէֆեանը: Անոնց խօսքի մէջ ուշադրաւ էին «Իմաստուն նորածին», «Նորատունկ ծառ» եւ «Դիւրբան անկախութիւն» արտայայտութիւնները:

Աւարտական դասարանի աշակերտուհիներ Սոնիա Տարագճեանը եւ Աթինա Պաղտասարեանը փափաքեցին հայրենասիրական բանաստեղծութիւններով հանդէս գալ: Անոնք հայրենի բանաստեղծ Յովհաննէս Գրիգորեանի «Հայաստան» եւ «Աղօթք» քերթուածները արտասանեցին բացատրական նախաբաններով: 11րդ դասարանի աշակերտուհի Լուսին էփեանը այս

առիթով պատրաստած էր մէկ ալլարտասանութիւն, ալլաբանական ժամանակակից քերթուած մը՝ «Այս Ծառը Սուրբ», որուն հեղինակն է պոլսահայ բանաստեղծ Ջարեհ Խրախունին: Իսկ դպրոցի կրտսեր աշակերտները, 6-8 դասարանցիներ, իրենց ուսուցչուհի Լինտա Գանտիլեանի առաջնորդութեամբ պատրաստեցին խմբային մէկ արտասանութիւն՝ Համօ Սահեանի «Հայաստան Ասելիս» յայտնի եւ դպրոցականներու կողմէ շատ սիրուած քերթուածը:

Ապա բուռն ծափահարութիւններով բեմ եկաւ ձեմարանի նորաստեղծ պարախումբը: (Պարուսուցներ՝ Փաթիլ եւ Սինթիա Ալպարեան քոչրեր) Անոնք ներկայացուցին Արա Գեորգեանի երաժշտութեան հետ հիւսուած «Անկախութեան պարը», որմէ յետոյ վարժարանի բոլոր աշակերտները բեմ եկան միասնական շուրջպարի համար: Յայտագիրը աւարտեցաւ Հայ Աշակերտի Ուխտով եւ Տէրունական Աղօթքով:

Պլեյր վարժարանի Հայկական ձեմարանը (Blair High School Armenian Academy) Փասատենա կրթական շրջանակի պատկանող դպրոց է: Ան բաց է շրջակայ բոլոր քաղաքներու հայտնիներու համար: ձեմարանի նպատակն է 6-12րդ կարգերու աշակերտներուն անվճար հայեցի դաստիարակութիւն տալ: Հայերէնի դասերը ամէն օր են եւ բոլորը ունին Քալիֆորնիոյ Համալսարաններու վարկաւորում (UC accreditation): ձեմարանը ունի նաեւ հայկական պարի դասարան եւ հայկական երգչախումբ: Դիմում կատարելու կամ յաւելելու տեղեկութիւններ ստանալու համար այցելել՝ [www.ArmenianAcademy.org](http://www.ArmenianAcademy.org)

## Յիշատկի Ոգեկոչում Նուիրուած Իրաւաբան Գասպար Տէրտերեանի

Կիրակի Հոկտեմբերի 3, 2021, վէն Նախի Սուրբ Պետրոս Հայաստանեայց եկեղեցւոյ մէջ, յաւարտ Ս. պատարագի, տեղի ունեցաւ հոգեհանգստեան արարողութիւն, նուիրուած լիբանանահայ գաղութի ականաւոր անձնաւորութիւններէն իրաւաբան Գասպար Տէրտերեանի մահուան քառասունքին:

Եկեղեցական արարողութեանէն ետք, յարակից սրահին մէջ, տեղի ունեցաւ յիշատակի հաւաք ականաւոր իրաւաբան եւ հայ դատի աննկուն պաշտպան, վաստակաշատ հրապարակագիր եւ հայ արաբ բարեկամութեան ջերմ շատագով Գասպար Տէրտերեանի յիշատակին:

Սոյն ոգեկոչական միջոցառումին ներկայ էին Պէյրութի Հ.Բ.Ը. Միութեան Յովակիմեան Մանուկեան մանչերու երկրորդական վարժարանէն շրջանաւարտ հանգուցեալի երբեմնի դասընկերներէն եւ համակիրներէն շուրջ 25 հոգի:

Կազմակերպիչ յանձնախումբի անունով յուշահանդէսի բացումը կատարեց ծանօթ մանկավարժ, հրապարակագիր եւ «Նոր Օր» շաբաթաթերթի նախկին խմբագիր Դոկտ. Մինաս Գոնոյեան: Ան Հանգամանօրէն բնութագրեց նորոգ հանգուցեալ իրաւաբան Գասպար Տէրտերեանի նկարագրային առանձնատկութիւնները, որպէս հայ դատի մութ ծալքերու եւ իրաւական հարցերու հմուտ մեկնաբան:

Ոգեկոչական ելոյթներով հանդէս եկան նաեւ Սարգիս Մինասեան եւ Օշին Քէշիշեան:

# Ս. Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցւոյ Շաբաթօրեայ Վարժարան. Վերամուտ Եւ Անկախութեան Տօնակատարութիւն Փասատենայի Մէջ



11 Սեպտեմբեր 2021, Շաբաթօրը խանդավառ եւ տօնական էր Փասատենայի մէջ: Այդ օր իր դռները ճեղք անգամ բացաւ Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ շաբաթօրեայ վարժարանը:

Վերամուտի հաւաքոյթը սկսաւ տնօրէն Նորայր Տատուրեանի բարակցութեան հիմնադրութեան 30ամեակը:

Յայտագիրը, որ ունէր նաեւ դաստիարակչական բնոյթ, սկսաւ Հայաստանի վերանկախացման ճանապարհը եւ Հայկական պետական նշանները ներկայացնող սահիկներու ցուցադրութեամբ: Փոքրիկ աշա-

րակները հիացումով եւ հպարտութեամբ դիտեցին եռագոյնի, զինանշանի, խորհրդարանի, մայրաքաղաքի լուսանկարները ու պարզ տեղեկութիւններ ստացան անոնց մասին:



րի գալուստի խօսքով: Ան շեշտեց 2021-22 տարեշրջանի համար ծրագրուած հանդէս եւ միջոցառումներու ճոխութիւնը եւ ըսաւ, թէ հայապահպանման լաւագոյն ճամբան ազգային ինքնութեան ճանաչումն է ու այդ նպատակով վարժարանը լայն տեղ կը տրամադրէ իր սաներուն ազգային եւ հոգեւոր կրթութիւն տալու ջանքերուն: Ապա ան ներկայացուց ուսուցչական կազմը, ինչպէս նաեւ դպրոցին համար ջանադրաբար աշխատող նախկին սաներու կամաւորական կազմը:

Եկեղեցւոյ բակին մէջ տեղի ունեցած հաւաքոյթի ընթացքին նաեւ խօսք առաւ եկեղեցւոյ հոգեւոր հովիւ Սարգիս Ա. քհնյ. Փետրեանը: Ան շնորհաւորեց ծնողները եւ աշակերտները, ըսելով, թէ անոնք հայեցի դաստիարակութիւնը կը գերադասեն ու հաւատքով կը փութան հայկական վարժարան: Կատարուեցաւ դպրոցական նոր տարեշրջանի յաջողութեան համար Տէրունական աղօթք, ինչպէս նաեւ Հայաստանի քայլերգի միաբերան կատարում:

Աշակերտները ապա ծնողներու եւ հիւրերու ծափահարութեամբ խումբ առ խումբ դասարաններ ուղղուեցաւ, ստանալու համար մտքի լոյս եւ գիտութիւն:

Իսկ 25 Սեպտեմբեր, Շաբաթօր, շաբաթօրեայ վարժարանի սաները ջերմ ու ներշնչող յայտագիրով մը տօնեցին Հայաստանի Հան-


րակները հիացումով եւ հպարտութեամբ դիտեցին եռագոյնի, զինանշանի, խորհրդարանի, մայրաքաղաքի լուսանկարները ու պարզ տեղեկութիւններ ստացան անոնց մասին:

Ապա հանդէս եկան Պլեյր երկրորդական վարժարանի Հայկական ձեմարանէ հիւր աշակերտուհիներ, որոնք հայրենասիրական բանաստեղծութիւններ արտասանեցին շաբաթօրեայ վարժարանի փոքրիկներու համար: Հայկական ձեմարանի պարախումբի անդամ այդ աշակերտուհիները Արա Գեորգեանի, ինչպէս նաեւ խանդավառ ծափահարութիւններու ընկերակցութեամբ ներկայացուցին Անկախութեան նուիրուած հայրենաշունչ պար մը: Անոնք Շաբաթօրեայ վարժարանի մանուկներուն ներշնչում տուին, որ անոնք ալ շուտով մասնակցին հայկական պարախումբին: Ապա բոլոր աշակերտները եւ ծնողները մասնակցեցան միասնական շուրջպարին: Անոր հետեւեցան Տէրունական աղօթքի եւ վերանկախացած Հայաստանի պետական քայլերգի միաբերան եւ բարձրաշունչ կատարումները: Յայտագիրը ունէր քաղցր աւարտ. աշակերտները «Տօնդ Շնորհաւոր» երգելով կտրեցին Անկախութեան կարկանդակ մը:

Ս. Գրիգոր Լուսաւորիչ շաբաթօրեայ վարժարանը հայոց լեզուի եւ մշակութիւնի դաստիարակութիւն կու տայ 4-12 տարեկան հայտնիներուն:



# Մեր Սուրբ Թարգմանիչները



## ՎԵՐ. ՂՈԿՏ. ՎԱՀԱՆ Յ. ԹՈՒԹԻԿԵԱՆ

Հոկտեմբեր ամիսը նուիրագործուած է որպէս Մշակոյթի Ամիս, հայ ժողովուրդին յիշեցնելով ամէն տարի իր անմահանուն Ս. Թարգմանիչները: 20-րդ դարու մեր իմաստուն կաթողիկոսներէն Գարեգին Ա. Յովսէփեանց, Մեծի Տանն Կիլիկիոյ երջանկայիշատակ հայրապետը, 1940-ական թուականներուն Հոկտեմբեր ամիսը հռչակեց Հայ Մշակոյթի Ամիս՝ պանծացնելու մեր Ս. Թարգմանիչներու գրական վաստակը:

Պատմականօրէն Ս. Թարգմանիչաց տօնը Հայ Եկեղեցւոյ Տօնացոյցին մէջ ներմուծուեցաւ 13-րդ դարուն: Այդ բարեբաստիկ աւթով Վարդան Արեւելեցի նշանաւոր պատմիչը հեղինակեց Ս. Թարգմանիչներու նուիրուած «Որք զարդարեցին» գեղեցիկ շարականը: Նախ քան այդ թուականը, հարկ է յիշել որ հայ ժողովուրդը 5-րդ դարէն սկսեալ մեծ յարգանք ցոյց տուած է Թարգմանիչաց հոյճը գլխաւորող՝ Սահակ Պարթև կաթողիկոսին եւ Մեսրոպ Վարդապետ Մաշտոցին, որոնց համար հայութեան հոգեւոր եւ մշակութային անկախութիւնը գլխաւոր մտահոգութիւն էր:

Թէեւ Քրիստոնէութիւնը պետական կրօն հռչակուած էր Հայաստանի մէջ 301 թուականին, ան լիովին չէր արմատացած հայ ժողովուրդի կեանքին մէջ, որովհետեւ Աստուածաշունչ Մատեանը կը կարգացուէր յունարէն եւ ասորերէն լեզուներով: Մինչեւ 5-րդ դարու սկիզբը հայ ազգը իր սեփական Այբբուբենը չուներ: Այդ օրերուն ան կորսնցուցած էր ոչ միայն իր քաղաքական, այլ նաեւ իր մշակութային անկախութիւնը:

Հինգերորդ դարու սկիզբը հայ ազգի ղեկավարները մտածեցին հնարել սեփական նշանագիրեր որպէս զի այդ գիրերով թարգմանեն Աստուածաշունչը հայերէնի: Գիրերու գիւտին ստեղծիչը դարձաւ Մեսրոպ Վարդապետ Մաշտոց 406 թուականին: Ասիկա եզակի շրջադարձ մըն էր հայոց պատմութեան մէջ, որովհետեւ այս ձեւով հայ ժողովուրդը կ'ապահովէր իր հոգեւոր եւ մշակութային անկախութիւնը:

Հայ գիրերու գիւտէն ետք, հայոց Վուստպպուհ Թագաւորի հրամանով Հայաստանի բոլոր գաւառներէն հաւաքուեցան շուրջ 60 ուշիմ երիտասարդներ Մեսրոպ Վարդապետի շունչով դաստիարակուեցան եւ տիրացան հայ լեզ-

ուին: Անոնք ղրկուեցան Միջին Արեւելքի նշանաւոր մշակոյթի կեդրոնները որպէս զի հմտանան յոյն եւ ասորի լեզուներուն:

Այս աշակերտները իրենց գիտութեան պաշարին հետ Հայաստան բերին նաեւ ստուարաթիւ ձեռագիրներ, որոնք հայերէնի թարգմանեցին՝ Ս. Մեսրոպ եւ Ս. Սահակի հովանաւորութեան ներքեւ: Աստուածաշունչի առաջին թարգմանութիւնը հայաձեւով եղած թարգմանութիւն մըն էր, որ տեղի ունեցաւ 408-415 թուականներուն եւ կոչուեցաւ Փութանակի թարգմանութիւն: Անկէ ետք ուրիշ թարգմանութիւն մը կատարուեցաւ 430-ական թուականին Սահակ կաթողիկոսի հսկողութեան տակ՝ յունարէն բնագրի վաղեմի թարգմանութեանց վրայ հիմնուած, որ հետագային օտար ուսումնականներ պիտի չվարանէին կոչել «Թագուհի թարգմանութեանց»:

Աստուածաշունչի հայերէն թարգմանութիւնը բացառիկ հանգրուան մը հանդիսացաւ հայ մշակոյթի պատմութեան մէջ: Արիթ դարձաւ, որ անով բիւրեղանայ դասական հայերէնը: Այնուհետեւ, թարգմանուեցան եկեղեցական, դաւանաբանական, պատմական, փիլիսոփայական մեծաթիւ գործեր, որոնք հայ ժողովուրդի մշակութային գանձարանը ճոխացուցին: Թարգմանիչներու սքանչելի նուաճումները 5-րդ դարը դարձուցին հայ գրականութեան Ոսկեդարը:

Թարգմանիչներու հոյակապ վաստակը ազգային ամրակուռ դիմագիծ տուաւ հայ ժողովուրդին: Ան գորացուց եւ ամրապնդեց քրիստոնէական կրօնի արմատները Հայաստանի մէջ: Կերտեց ու կարգապահեց վարդապետաց եւ վահանանց սերունդներու տոհուն նկարագիրն ու հայրենաշունչ ոգին՝ ծառանալու համար հայ ժողովուրդի հաւատքին եւ հոգիին սպառնացող վտանգներուն դէմ:

Մեր Ս. Թարգմանիչները նաեւ ներշնչարան եւ մղիչ ուժ հանդիսացան հետագայ սերունդներուն, որոնք իրենց ստեղծագործութիւններով զարգացուցին մեր գրականութիւնն ու մշակոյթը:

Արդարեւ, Թարգմանիչներու իրագործումները դուռ բացին հոգեմտաւոր շարժումի մը որ մշակոյթի ջահը վառ պահելով՝ անցուց գալիք սերունդներուն: Այսպէս, Սահակ-Մեսրոպեան մշակութային շարժումը ծնունդ տուաւ մտաւորական տիտաններու, ինչպէս վարդանանց Պատերազմի ականատես

# Հայոց Մեծերից Զօրավար Անդրանիկ Փաշա

«ԹՃՆԱԺԻՆ թողուլ եւ Աերքին մանր-մունր հաշիւներով գբաղլլ, ոճիր է, հայրեցիքի մահն է»

ԴԻՍՈՒՄ-ԿՏԱԿՆ ԻՐ ԶԻՆՈՒՈՐՆԵՐԻՆ ՅԱՐԳԱՆՔԻ ՀԱՄԱՐ (ԶԻՆՈՒՈՐՆԵՐՈՒՄ)



Երբ թուղթերու ծրարները կը քրքրէի, Կովկասեան ճակատին վրայ ձեր կատարած գործերուն համեստ օրագրութեան հանդիպեցալ, ձեր ընկեր զինուորներէն մէկուն կողմէ նօթագրուած: Կարօտցած բարեկամիմը եւ սիրական դէմքի մը նման ողջագուրեցի զայն, համբուրեցի ձեզ՝ համբուրելու անուշ զգացումն ունենալով: Ձեր ընկերը, իր համեստ կարողութեամբ նօթագրած չէր եւ ոչ ալ պատմած էր ձեր կրած չարչարանքները, զրկանքները եւ նեղութիւնները, այլ մեկ երկու տողերով օրուան անցքերը եւ մեծ կոխվեցուցումն պատմութիւնները ըրած էր «օր մը դուցէ այդ գոհաբերումները պէտքի մը ծառայեն»:

Սիրելի զինուորներս, Հիմա, որ ձեր կատարած գործերուն շատ համեստ կերպով նկարագրուած պատմութիւնը մամուլին կը յանձնեմ, չեմ կրնար յարգանքի եւ հիացումի երկու խօսք չըսել ձեր անունին, երբ կը մտաբերեմ ձեր կատարած գոհաբերումներն ու յաղթանակները: Վերջին տխուր դէպքերուն առջեւ երբ կը կարմրինք ու երբ օտարներ կը փորձեն անուանարկել Հայ զինուորին արժանապատուութիւնը, դուք ձեր քաջութեամբ, ձեր պատմութեամբ եւ գործերով անոնց աչքերուն առջեւ կը ցցուիք, արհամարելով զանոնք, բարձր բռնելով Հայ զինուորին եւ Հայ ցեղին արժանապատուութիւնը: Դուք գիտցաք կուռիլ անոր համար, որ դուք կը հասկնայիք ԿՈՒՒՅԵՆ ԱՐԺԻԲԸ, դուք կրցաք պարտութեան մատնել թշնամին եւ հիացում հրաւիրել ձեր վրայ, անոր համար, որ ԳԻՏԻՒՅԻ ՆՈՒԻՌՈՒՄ ԵՒ ԳԻՏԻՒՅԻ ՄԱՌԱՅԵԼ ՀԱՅՐԵՆԻՔԻՆ ՈՒ ԱՆՈՐ ԱԶԱՏՈՒԹԵԱՆ: Երեսուն տարիներէ ի վեր Հայ զինուորը բարձր բռնեց իր անունը եւ պատիւը: Սասունէն սկսեալ մինչեւ Պալքանեան պատերազմը եւ անկէ մինչեւ Զանգեզուր, Միսեան, Ղաբան ու Զապուխ ձէքերը գետերը Կովկասի ճակատին վրայ ձեր մարտնչուումները աշխարհ հիացուցին: Ֆէրիք, Ալի, Եսկէր, Ալի Իհասան, Խէլիլ, Վէհիպ եւ Նուրի փաշաները եւ անոնց ամենայնպէս զիուորներն իսկ տեսան ու ճաշակեցին ձեր մարտնչուումները...: Անոնք ճանչցան ձեր ուժն ու սիրտը եւ վարդանանցան ձեր առջեւ, բայց ձեր հարգատ ցեղին մէկ մասը չճանցաւ... ու չյարգեց ձեզ...

Ինչ՞ բան էր, որ մղեց ձեզ թողուլ ձեր տունները, ձեր գործերը եւ հանգիստը, երիտասարդ կեանքի վայելքներուն հետ եւ զալ պատերազմի դաշտ շաղկիւռ ձեր հրացանն ու առերկը: Ես կը զգայի եւ կը հասկնայի ձեր գոհաբերումներուն արժանիքը եւ իմաստը: Ես գիտէի, թէ որքան ծանր էր ձեր վրայ ճնշող պատասխանատուութիւնն ու պարտականութիւնը:

Մեծ համբերութեամբ կրեցիք ձեր չարչարանքները եւ մեծ հաւատքով տարիք ձեզի յանձնուած գործը: Ես չլսեցի տրտուողի ոչ մէկ բառ, ցաւի ոչ մէկ արտայայտութիւն: Մերկ էիք, անօթի մնացիք օրերով, ձմրան ցուրտը, փուքն ու քամին, ձիւնն ու անձրեւը, կարկուտին հետ ծեծեցին ձեզ, բայց դուք արհամարեցիք զանոնք թշնամիին գնդակներուն հետ: Ձեր այս կեցուածքը քաջալերեց զիս, ուրախացուց սիրտս եւ մենք կրցինք շահիլ փառաւոր յաղթանակներ ՀԱՅ ԱՆՈՒՅԻՆ ՀԱՄԱՐ:

6000 վերստ ճամբայ կտրեցիք Կովկասի ճակատին վրայ խոչնդոտներու եւ դժուարութեանց կուրծք տալով: Դուք ՀԱՊՏԵՐՆԵՐՆ ԷՒ ԲՈՒՄ ԲԱՆԱԿԻՆ, դուք առաջնորդները Ռուս զինուորի շաղկին: Օտարը հիացաւ ձեր վրայ, ՀԻԱՅԱԻ ԷՒ Հրամանատարն ալ բերկրեցաւ ձեզ համար, վստահ ձեր Հայու հօր բազուկներուն նոր յաղթանակներու դիմաց:

Ի՞նչ վսեմ սէր ու մաքուր զգացում էր, որ ունէիք դուք ձեր կրօնքերուն տակ: Ես բոլոր դժուարութիւններուն մէջ ձեր դէմքերուն վրայ հրճուանք կը տեսնէի, երբ անկէ ու անկէ Հայ մասուկներ եւ Հայ զաղթականներ հաւաքելով ինձի կը բերէիք: Դուք ձեր հացը, ձեր հագուստը եւ հանգիստը կը տրամադրէիք անոնց երջանկութեան, անոնց բարօրութեան եւ հանգստին համար: Ռուս պետութիւնը ձեր կուրծքերը ոսկի եւ արծաթ խաչերով եւ մետալներով պսակեց: Այդ խաչերը եւ այդ մետալները օտար զինուորականներու գովեստին հետ ձեր սրտերը հրճուանքով չլեցուցին այնքան, որքան հրացանը ձեռքերնիդ թշնամիին դիմաց վրէժը վրէժով եւ արիւնը արիւնով կը մաքրէիք... Թշնամիին անկուսը ձեր հրճուանքն էր եւ Հայու մը զատագրումը ձեր ժպիտը: Ինչպէս ձեզմէ շատերը:



### Աղա Սարգսեան եւ Սողոմոնեան Ընտանիքների Խաչքարերի Օծում



Սեպտեմբերի 19-ին, 2021 թվականին, զիս նոյնպէս հրաւիրած էին և ես ակնատես եղայ Առաջնորդարանի բակին մէջ տեղադրուած երեք խաչքարերու բացման արարողութեան: Միջոցառման ներկայ էին բազմաթիւ պատուարժան մարդիկ: Հայաստանէն հրաւիրուած էին երեք սրբազաններ, երեսփոխաններ: Ատլանդայէն հրաւիրուած էին հիւրեր, իրաւաբաններ, բժիշկներ: Լոս Անճելըսէն՝ Հայաստանի Գլխաւոր Հիւպատոսը, լրագրողներ, գործարարներ, յայտնի ընտանիքներու անդամ մարդիկ: Խօսքով հանդէս եկան տարբեր անձեր:

Ձիւ շատ տպաւորեց հեռուտալրագրող՝ Էլմիրա Գասպարեանի սրտաբուխ խօսքը, որ ուղղակի ցնցեց բոլորին, յուզեց եւ մասնակիցները ծափերով յայտնեցին իրենց երախտագիտութիւնը Տիկ. Էլմիրային:

Արդ, ես սիրով ձեզ կը ներկայացնեմ Տիկ. Էլմիրա Գասպարեանի տպաւորիչ խօսքը, որ հնչեց այս միջոցառման ընթացքին: \*\*\*\*\*

Գերաշնորհ հայրեր, սիրելի հյուրեր, պետական այրեր, յարգարժան ներկաներ: Նախ ողջունում եմ բոլորիդ այս բացառիկ միջոցառմանը մասնակցելու համար:

Յարգարժան ներկաներ, ես ճիշտ չեմ համարի, եթէ նախքան իմ խօսքը, մենք չանդրադառնանք եւ մեր յարգանքի տուրքը չմատուցենք մեր հայրենիքում տեղի ունեցող ահաւոր անհերքելի իրականութեանը:

Ես համբերութիւն եմ մաղթում 5,000 որդեկորոյս մայրերին, 11,000 հաշմանդամ եւ վիրաւոր մեր հերոս տղաներին, հարիւրաւոր անհետ կորած եւ գերեզմարուած մեր զինուորների հարազատներին, Արցախում տարածքներ կորցրած, անտուն ու թափառական դարձած մեր հազարաւոր հայրենակիցներին, Սիւնիքում կատարուող անարդար իրավիճակին, հայի ինքնասիրութիւնն ու մէջքը կտորած, մեր բազմահազար սփիւռեցաւայրերին, մաղթում եմ բոլորիս համբերութիւն: Մաղթում եմ, որպէսզի մեր հայրենիքը շուտ ոտքի կանգնի, շտկի իր մէջքն ու վերականգնի իր արժանապատուութիւնն ամբողջ աշխարհում: Մենք այն ազգն ենք, որ տարիներ շարունակ, մեր արուեստով, գրականութեամբ եւ մշակոյթով ներկայացել ենք աշխարհին և կանգնել քաղաքակիրթ ազգերին հաւասար:

Ես հաւատում եմ, որ հայ ազգն իր միասնականութեամբ կարող է

վերականգնել մեր հայրենիքը: Լի-նենք արժանի մեր հայրենիքին և օրինակելի՝ գալիք սերունդների համար:

Ես հաւատում եմ վաղուայ լուսաւոր օրուան: Սա՛ է թերևս մեր հայ լինելու և հայ մնալու ամենամեծ երաշխիքն ու գրաւականն ամբողջ աշխարհում:

Փա՛ռք ողջ հայութեանը - Հայաստանում, Արցախում եւ ի սփիւռս աշխարհի:

Յարգարժան ներկաներ, Այսօր մենք ակնատես եղանք շատ կարևոր խաչքարերի բացման արարողութեան, որօնցից մէկը ի յիշատակ Բալեան գերզաստանի, որի անդամներից շատերը գոհուել են 1915-ի ցեղասպանութեան ժամանակ: Այդ գերզաստանի շուքալիդ՝ Շաքէ Բալեան, Աղա Սարգսեան ընտանիքն է, իսկ Աղա Սարգսեան ընտանիքը Ատլանդայից սիրելի մայրիկի յիշատակին յաւերժացրեց այս երեք խաչքարերից մէկը:

Միւս խաչքարը նուիրուած է մեր արցախեան գոյամարտի նահատակների յիշատակին, որը նոյնպէս հովանաւորում է Աղա Սարգսեան ընտանիքի կողմից:

Երրորդ խաչքարը նուիրուած է մեր շատ սիրելի Սուրոյի՝ Սուրենի Սողոմոնեանի յիշատակին եւ հովանաւորում է Սողոմոնեան ընտանիքի կողմից՝ Նշան Օհանեանի գլխաւորութեամբ:

Փառք ու պատիւ մեր բոլոր հովանաւորներին այս սուրբ գործը արժեւորելու եւ կեանքի կոչելու համար: Եւ մենք բոլորս ակնատես եղանք այդ խաչքարերի բացման արարողութեանը:

Յարգարժան ներկաներ, այժմ ես պիտի խոսեմ իմ լաւ բարեկամ՝ Սուրէն Սողոմոնեանի մասին: Մարդ, ում մասին, ցաւօք, յետմահու պիտի խօսեմ, քանզի նրա կեանքի թելը կտրուեց շատ անսպասելի:

46 տարեկան հասակում, նա հեռացաւ կեանքից, վշտի մէջ թողնելով կնոջը՝ Լուսինէին, գաւակներին, բոլորին...

Ես համոզուած եմ, որ անբացատրելի ցաւ, մեծ ափսոսանք ու զարմանք ապրեց իւրաքանչիւր ոք, ով լսեց Սուրոյի անժամանակ մահը: Նա խոսովեց այս աշխարհից ու հեռացաւ: Խոսովեց, քանի որ դեռ շատ անելիքներ ունէր, շատ կիսատ թողած գործեր, դեռ չապրած կեանք, որն այդպէս էլ չհասցրեց ապրել: Այո, անաւարտ մնացին նրա շատ ու շատ երազանքներ: Եւ ես վստահ եմ, որ Սուրոյի հոգին շնչում է:

- Մի կեանք էր ի՞նչ ամէն ինչ անելու եւ հասցնելու համար:

- Երանի՛ նրան, ով ոչինչ կիսատ չի թողնում...

Սուրէն Սողոմոնեանը օժտուած էր մարդկային բարձր արժանիքներով: Սիրում էր կեանքը, սիրում էր մարդկանց և նուիրուած էր անմնացորդ:

Շատ էր սիրում արուեստ, գրականութիւն, մշակոյթ և միշտ կանգնած էր մեր ազգային արժէքների կողքին:

Նա ունէր գրուած գեղեցիկ ու խորիմաստ բանաստեղծութիւններ շարք և պատրաստուած էր այն գրքի վերածել:

Նրա ազգապահանգ գործունէութիւնը սահմաններ չունէր: Նա պատրաստակամ կանգնած էր ազգի, հայրենիքի և եկեղեցու կողքին:

Տարիներ շարունակ նա օգնել է Հայաստանի մանկատներին, ծերանոցներին, պատերազմի հաշմանդամներին, արցախեան պատերազմում գոհուածների ընտանիքներին, եկեղեցուն, կարմիր խաչին, նոյնիսկ օտարազգի հիւանդ երեխաներին ու շատ-շատերին: Եւ հաւատքը դէպի վաղուայ լուսաւոր օրը, նրա հոգում միշտ արթուն էր պահուած սէրը դէպի հայրենիքը, դէպի իր ժողովուրդը, առաւել դէպի ժողովրդի այն հատուածը, ովքեր ապրում էին ծանր ու դժուարին պայմաններում:

Եւ նա կը շարունակէր իր բարեգործութիւնները, եթէ յանկարծակի չկտրուէր նրա կեանքի թելը... Սակայն այն ինչ գրուած եւ տրուած է ի վերուստ, ոչինչ անել կամ ոչինչ փոխել չես կարող: Դա՛ էր նրա ճակատագիրը: Լոյս աշխարհ եկաւ, ստեղծեց, արարեց մահն եկաւ, ամէն ինչ թողեց ու զնայ: Գնաց, իրենից յետոյ թողնելով լալ, բարի ու արժանի հայորդու անուն: Մենք միշտ յիշում ենք նրան: Իսկ մարդ է՞րքէ մահանում, երբ դադարում են նրան յիշել, քանի մենք բոլորս պիտի յիշենք Սուրոյին, նա կ'ապրի, իսկ յետմահու այսպիսի մեծարանքը արժանի է յաւերժ յիշելու նրան ու նրա կատարած բոլոր ազգանուէր գործերը:

Փա՛ռք ու պատիւ արժանի հայորդուն:

Անհերքելի փաստ է, կեանքը մարդուն տրուած է ժամանակաւոր, իսկ վերցուած է ընդմիշտ:

Շատ կարեւոր է, որպէսզի իւրաքանչիւր մարդ, իրեն տրուած այդ ժամանակահատուածն ապրի արժանապատուօրէն, որպէսզի իրենից յետոյ դատարկութիւն չլինի: Սուրէն Սողոմոնեանը իր ապրած կեանքով, իր մարդ տեսակով, իր կատարած ազգանուէր գործերով, յաւերժ կը մնայ մեր յիշողու-

### Մեր Սուրբ Թարգմանիչները

#### Շարունակուած էջ13-էն

պատմիչ՝ Եղիշէին, նշանաւոր պատմագետ՝ Փաւստոս Բիւզանդի, անուանի իմաստասէր եւ իրաւագետ՝ Եգնիկ Կողբացիի, հայոց պատմահայր՝ Մովսէս Խորենացիի: Ապա հայոց պատմութեան երկնակամարը զարդարեցին փայլուն մտաւորական աստղեր՝ նման 7-րդ դարու Անանիա Շիրակացիին, 10-րդ դարու Գրիգոր Նարեկացիին, 12-րդ դարու Ներսէս Շնորհալիին, Ներսէս Լաբրոնացիին, Մխիթար Գօշին, 14-րդ դարու Յովհան Որոտնեցիին, Գրիգոր Տաթևացիին եւ ուրիշներու: Այնուհետեւ, այդ օրերէն մին-

թիւններում:  
Մարդ մի անգամ էլ լոյս աշխարհ գալիս, Ստեղծում, արարում, թողնում, հեռանում:  
Երեկ այն մարդուն, ով ապրած կեանքում Միշտ մարդ է մնում ու մարդ հեռանում:  
Խօսք ուզում եմ աւարտել Սուրոյի գրած մի գեղեցիկ բանաստեղծութեամբ:  
Սուրոն եղեռնը վերապրածների յաջորդ սերունդներին էր:  
Սուրոյի խօսքերն են՝  
Թող անցնեն գնամ օրերը դժուար,  
Աշխարհում մնա հայի սէրը վառ:  
Ես իմ բողոքի ծայրն եմ բարձրացնում առ աշխարհ եւ իմ բանաստեղծութիւնը  
Չունում մեր արդար պայքարին:  
Սուրոյի այս խօսքերն ու բանաստեղծութիւնը տպագրուել է իմ ամուսնու՝ Ռուբէն Գասպարեանի՝ Ղուբբանի հեղինակած՝ «1,5 Միլիոն Արեան Կանչ», Ցեղասպանութեան 100-ամեակին նուիրուած գրքում, որի էջերից մէկը նուիրուած է Սուրէն Սողոմոնեանին:

#### ՆԱՄԱԿ ԳՐԵՍ ՀԱՅԱՍՏԱՆԻՆ

Նամակ գրեմ Հայաստանին, Սեզ սարերին ու Լեռներին, Հաւքեր տաճեմ Գամակս տուն, Մասիս սարին կամ Սեւաճին:  
Կամ էլ թող տան քո վանքերին, խաչքարերին,  
Գովքս գրուած թող-որ կարդան տաճարներին,  
Թող-որ պատմեն Ձանգեգուրին, Տաթօ վանքին,  
Չմոռնան Հաղպատ վանքին, Նորավանքին:  
Չմոռնանք մենք յիշեցնել մեր գետերին՝  
Եփրատ գետին, Արածանին, Մայր Արաքսին,  
Թող-որ փարուեն վեհաճակատ մեր Լեռներին,  
Սպիտակափառ Մասիս սարին, Արագածին ու Նեմրուծին:  
Միւս մամակս պիտի գրեմ Արեւմտեան Հայաստանին,  
Պիտի գրեմ Վանայ լճին, Մուշին, Վանին, Արդահանին:  
Մասիս սարին պիտի խնդրեմ ճամբայ բացի,  
Որ խռոված երկու եղբոր մա միացնի:

Շնորհակալութիւն:  
Հեռուստալրագրող՝  
**ԷԼՄԻՐԱ ԳԱՍՊԱՐԵԱՆ**  
\*\*\*\*  
Սիրելի ընթացող, ես նոյնպէս շնորհակալ եմ, որ կարողացայ Ձեզ հետ կիսել իմ զգացումները:  
**ՆԵՐԿԱՅ ՄԸ**

չէ մեր օրերու մտաւորականները կը շարունակեն Թարգմանիչներու սրբազան գործը, մեր նախնիքներու երկնած եւ շնչուցած կրօնաազգային ժառանգութեան ոգեկան կառուցիչն վրայ բան մը աւելցնելով:

Դարեր շարունակ հայ ժողովուրդը եկեղեցական կամ աշխարհիկ տօնակատարութեանց միջոցաւ իր յարգանքի տուրքը մատուցած է մեր հին երախտաւորներուն: Թարգմանչաց տօնի պատգամը այն է, որ մենք ալ շարունակենք ճանչնալ եւ սիրել մեր մշակոյթը, գնահատել եւ գործնապէս քաջալերել անոր ներկայ սպասարկողները:



ՀՈԳԵՐԱՆԳԻՍ



ՏԻԳՐԱՆ ՍԱՐԱՖԵԱՆԻ մահուան Ա. տարելիցին առիթով Կիրակի, Հոկտեմբեր 10, 2021ին յաւարտ Ս. Պատարագի տեղի պիտի ունենայ Հոգեհանգստեան պաշտօն, Փասատինայի Ս. Գրիգոր Հայց. Առաք. եկեղեցւոյ մէջ, որմէ ետք Հոգեհաշ պիտի մատուցուի Փասատինայի Հ.Կ.Բ.Մ.ի սրահին մէջ, 1060 North Allan Avenue, Pasadena, CA

Խնդրողներ՝ Այրին Տիկ. Վարդուհի Սարաֆեան Տօքթ. եւ Տիկ. Համբիկ եւ Նայիրա Սարաֆեան Տէր եւ Տիկ. Յարութ եւ Նորա Միհրանեան-Սարաֆեան Տէր եւ Տիկ. Արթիւր եւ Հուրիկ Սաթեան-Սարաֆեան

ՀՈԳԵՐԱՆԳԻՍ



Հոգելոյս Տ. ԱՍՈՂԻԿ ԱԻ. ՔՀՆՅ. ԺԱՄԿՈԶԵԱՆԻ վախճանման քառասունքին առիթով յաւարտ Ս. Պատարագի Հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի Կիրակի, Հոկտեմբեր 10, 2021ին, Ս. Պետրոս Հայց. Առաք. եկեղեցւոյ մէջ, 17231 Sherman Way, Van Nuys, CA:

Սգակիրներ՝ Երէցկին Սոնա Արապաճեան-Ժամկոչեան Զաւակը՝ Տէր եւ Տիկ. Յակոբ եւ Արամ Ժամկոչեան Զաւակը՝ Տիար Ասպետ Ժամկոչեան Զաւակը՝ Տիար Գէորգ Ժամկոչեան Եղբայրը՝ Տիար Յակոբ Ժամկոչեան եւ համայն հարազատներն ու բարեկամները Հայկապէն, Յունաստանէն, Աւստրիայէն, Գանատայէն եւ Գալիֆորնիոյ շրջաններէն

ՑԱԲԱԿՑԱԿԱՆ

ՄԱՆՈՒԷԼ ԱԴԱՄԵԱՆԻ մահուան տխուր առիթով (մահացած Լոնտոն) Նոր Սերունդ Մշակութային Միութեան վարչութիւնն ու անդամները իրենց խորագրաց ցաւակցութիւնները կը յայտնեն վաստակաշատ գրող, բանաստեղծի, կրթական մշակի եւ հասարակական գործիչի, ընտանեկան համայն պարագաներուն, բարեկամներուն եւ մասնաւորաբար այրիին Տիկ. Լիլիթին:

ՑԱԲԱԿՑԱԿԱՆ

Հոգելոյս Տ. ԱՍՈՂԻԿ ԱԻ. ՔՀՆՅ. ԺԱՄԿՈԶԵԱՆԻ մահուան առիթով Տիկ. Ազնիւ Մութաֆեան եւ զաւակը՝ Մինաս Մութաֆեան իրենց խորագրաց ցաւակցութիւնները կը յայտնեն երէցկոջ եւ համայն ըտանեկան պարագաներուն:

ՑԱԲԱԿՑԱԿԱՆ

ՄԱՄՈՒԷԼ ՄԱԹՈՍԵԱՆԻ մահուան տխուր առիթով «Մասիս» իր խորագրաց վշտակցութիւնները կը յայտնէ հանգուցեալի այրիին՝ Տիկ. Կրէյս-Շնորհիկին, եղբոր Վեր. Յովսէփ Մաթոսեանին եւ համայն Մաթոսեան, Մալճեան եւ Ռազուպեան ընտանիքներուն ու բարեկամներուն:

ՌՈՐԵՐՈՒ ՔՈՇԱՐԵԱՆՆԸ ԿՐ ՎԵՐԼՈՒԾԱՐԻ՞

Շարունակուած էջ 2-էն

ստեղծուած լինելով անգամ, ըստ հուլիան գոյութիւն չունէր Պելլա-ուուսի եւ Ռուսաստանի իրական օրակարգում: Աւելին, այդ հարցը միայն բոլորովին վերջերս, վերջին տարիներին է, որ առարկայօրէն դրուած է Մոսկուայի եւ Մինսկի սեղանին, կամ Մոսկուայի դնում է Մինսկի սեղանին, իսկ Լուկաշենկոն՝ փորձում է ժամանակ ձգել որքան կարող է:

Հետեւապէս, Ռոբերտ Քոչարեանի նախագահութեան շրջանում Ռուսաստան-Պելլաուուս միութենական պետութեանը միանալու հարց լինել էր կարող, չկար դրա պահանջարկը Ռուսաստանից: Փոխարէնը, Ռուսաստանից կար այսպէս ասած Հայաստանի ռազմավարական ակտիւնները «միութենական պետութեան», իրականում Ռուսաստանի «կազմ» ներառելու հարց, որն էլ Մոսկուայի յաջողութեամբ իրականացրեց Ռոբերտ Քոչարեանի նախագահութեան շրջանում:

Հայաստանի ենթակառուցում քայլին ռազմավարական ակտիւնները միմեանց հետեւից սեփականութեան իրաւունքով անցնում էին Ռուսաստանի պետական կորպորացիաներին: Այդ շարքում էին Հայաստանի էլցանցները, որոնք ի սկզբանէ պէտք է մասնաւորեցուէին մրցույթով եւ ոչ մոնոպոլ տարբերակով, բայց օֆշորային ընկերութեան միջոցով ի վերջոյ մոնոպոլ կարգավիճակով անցան Ռուսական ՌԱՈ-ին: Այդ շարքում էր Հայ-ուսագաղաղը, որի հայ-ուսական

հաւասար բաժնեմասը հենց երկրորդ նախագահի շրջանում սկսեց աւելի ու աւելի «թեքուել» յօգուտ Գազպրոմի: Այդ շարքում էր Հայաստան-իւրան գազամուղը, որը տարանցիկ տրամաշափով չկառուցուեց, որովհետեւ դրան դէմ էր Ռուսաստանը, ինչպէս խոստովանել էր հներգետիկայի նախարարները մէկը յետագայում: Այդ շարքում էին Գոյք պարտքի դիմաց ծրագրով ՌԴ-ին անցած չորս ձեռնարկութիւնները:

Ռոբերտ Քոչարեանի նախագահութեան շրջանում Ռուսաստանին պէտք էր դա, եւ Ռուսաստանը ստանում էր պէտք եղածը: Աւելին պէտք էր: Հարց է առաջանում, իսկ հիմա պէտք է: Այդ հարցը սակայն չունի միանշանակ պատասխան, եւ երեւի թէ դրանով է նաեւ պայմանաւորուած, որ միանշանակ պատասխան չի տալիս նաեւ Ռոբերտ Քոչարեանը, փորձելով լինել այսպէս ասած իրավիճակին համահունչ եւ հարցը թողնել «վերլուծութեան», առանց այ կամ ոչ պատասխանի: Պելլաուուսի հետ Ռուսաստանը մտել են այսպէս ասած «մերձամարտ» այդ թեմայով եւ կարծես թէ գործադրում է վճռորոշ ճիգեր: Ռոբերտ Քոչարեանն ըստ ամենայնի դիտարկում է, որ այդ հարցը լուծելու դէպքում Ռուսաստանը անցնելու է Հայաստանին, եւ յամենայն դէպս ազդարարում է, որ Մոսկուայի կարող է իր վրայ յոյս դնել Հայաստանի անկախութիւնը «վերլուծելու» կամ իրականում՝ վերլուծարելու հարցում:

«ԵՐԵՒԱՆ ԼՈՒՐ»

Զօրավար Անդրանիկ Փաշա

Շարունակուած էջ 13-էն

Անոնց աճիւնները խառնուեցան մայր հողին: Խոնկով ու աղօթքով օրհնուած ու սրբացած գիր մը չդրին անոնց վրայ, աղօթք եւ սաղմոս չկարդացին, այլ միայն հովը սուլեց փայփայելով անոնց սեւ ու սիրուն վարսերը: Սիրելի Զինուորներա. Սա մէկ քանի տողերս իբր յարգանքի եւ գնահատանքի նշան ձեզի կը թողում իբր կտակ եւ սրտածօն ապրողներուդ եւ իբր տապանաբար անթաղ եւ անչիրիմ գինուորներուս:

Զօրավարը մահուանից առաջ

կնոջն ասել է հետեւեալը. Մահուան համար չեմ ցաւիւր, կը ցաւիմ, թէ որքան ուրախ պիտի ըլլան թուրքերը: Ահա չեմ հոգար, այլ գործս կիսատ մնաց: Եթէ այս անգամ ցաւս զիս տանի, մարմինս օտար հողի վրայ չթողնէք, անպայման Հայաստան փոխադրէք:

Իսկ եթէ զիս հայրենիք չընդունի, ձեռքիս ցուցամատը կտրել կու տաս են հոն (հնտեղ) կ'ուղարկես, տեղ մը թող թաղեն: Այս մատաշատ աշխատած է հայրենիքի համար եւ շատ հոգնած է, թող հայրենի հողի մէջ հանգստանայ...:

Համադրեց՝ ՊՕՂՈՍ ԼԱԳԻՍԵԱՆ

ՄԵՆՔ ԿԱՊԱՀՈՎԱԳՐԵՆՔ ՁԵՐ ԱՊԱԳԱՆ, ՈՐՊԵՍՁԻ ԴՈՒՔ ԿԵՆՏՐՈՆԱՆԱՔ ՆԵՐԿԱԻ ՎՐԱ



RESIDENT INSURANCE PRODUCER

Accident and Health Agent, Casualty Broker-Agent, Life-Only Agent, Property Broker-Agent

209 E. Alameda Ave., Suite 204 Burbank, CA 91502

WE INSURE YOUR FUTURE, SO YOU CAN FOCUS ON THE PRESENT



KARAPET S. DEMIRCHYAN CA LICENSE: 0C74479 demkarsinc@sbcglobal.net (818) 913-2414



### «Լիվերփուլ»-«Մանչեսթր Սիթի» Ոչ-Ոչի



Անգլիոյ ֆուտբոլի առաջնութեան 7-րդ հանգրուանի կեդրոնական խաղի ընթացքին մրցեցան «Լիվերփուլը» եւ «Մանչեսթր Սիթի»:

Լիվերփուլ քաղաքի «էնֆիլդ» մարզադաշտին վրայ կայացած խաղի առաջին կէսին խումբեր չօգտագործեցին իրենց հնարաւորութիւնները: Երկրորդ կէսին սկզբնաւորութեան Մանեն առաջ մղեց «Լիվերփուլին»: Սակայն ճիշտ 10 վայրկեան ետք «քաղաքայինները» վերականգնեցին հաշուի տարբերութիւնը: Կոլը նշանակեց Ֆոդեն: 76-րդ վայրկեանին Մուհամեդ Սալահը կրկին առաջ մղեց «Լիվերփուլին», իսկ «Մանչեսթր Սիթիին» կրկին հաշուի վերականգնեց Քեւին դէ Պրոյունէն:

Այս հանգրուանէն յետոյ «Լիվերփուլ» Փրեմիեր Լիգայի մրցաշարային աղիւսակին վրայ 2-րդն է (15 միաւոր), իսկ «Մանչեսթր Սիթի»՝ 3-րդն է (14 միաւոր): Առաջատարը 16 միաւորով «Չելսին» է:

Անգլիոյ ախոյեանութեան միւս մրցումներուն առաջատար խումբերը արձանագրեցին հետեւեալ արդիւնքները.

«Մանչեսթր Եունայթեդ»- «Էվերթոն» 1:1  
 «Չելսի-Սաութհամփթըն» 3:1  
 «Թոթընհամ»-«Ասթոն Վիլլա» 2:1

### «Նափոլին» Տօնեց 7-րդ Յաջորդական Յաղթանակը

Իտալական «Նափոլին» կը շարունակէ յաղթարշաւ Սերիա Ա-ի մրցաշարքէն ներս: Ֆուտբոլի առաջնութեան 7-րդ հանգրուանին «Նափոլին» հիւրընկալուեցաւ «Ֆիորենթինային» եւ առաւելութեան հասաւ 1:2 արդիւնքով: «Նափոլին» կազմին մէջ կոլերու հեղինակներ դարձան Իրուլին Լոսանոն եւ Ամիր Ռահմանին: «Ֆիորենտինայի կոլը նմանակեց Լուկաս Կուարտան:

Այս յաղթանակէն յետոյ «Նափոլին» կը շարունակէ գլխաւորել մրցաշարային աղիւսակը եւ ունի 21 միաւոր:

### «Ռոման» Յաղթեց Միսիթարեանի Կոլի եւ Կոլային Փոխանցման Շնորհիւ

Հայաստանի ֆուտբոլի ազգային խումբի աւագ Հենրիխ Մխիթարեանը «Ռոմայի» կազմին մէջ դարձաւ կոլի եւ կոլային փոխանցման հեղինակ:

Իտալիոյ ֆուտբոլի առաջնութեան 7-րդ հանգրուանին «Ռոման» Հռոմի Ողիմպիական մարզադաշտին վրայ ընդունեց «Էմպոլիին»: Նախ հանդիպման 42-րդ վայրկեանին Մխիթարեանի փոխանցումէն յետոյ Պելեգրինին առաջ մղեց «գայլերուն», իսկ երկրորդ կէսի 48-րդ վայրկեանին Մխիթարեանը անձամբ դարձաւ կոլի հեղինակ:



Այս յաղթանակէն յետոյ «Ռոման» Սերիա Ա-ի մրցաշարային աղիւսակին վրայ 4-րդն դիրքի վրայ է:

### ՊՍԺ-ն Առաջին Պարտութիւնը Կրեց 8 Յաղթանակէն Յետոյ

Ֆրանսայի առաջնութեան ՊՍԺ-ը 8 յաղթանակէն յետոյ կրեց առաջին պարտութիւնը: 9-րդ հանգրուանին արժենթինացի Մաուրիսիօ Պոչետինոյի գլխաւորած խումբը հիւրընկալուեցաւ «Ռենէն», որ առաւելութեան հասաւ 2:0 արդիւնքով:

Ֆրանսացի յարձակող Գաետան Լաբորդէն աչքի ինկաւ 45-րդ վայրկեանին, իսկ երկրորդ խաղակէսի առաջին վայրկեանին ան կոլային փոխանցում կատարեց ֆրանսացի կիսապաշտպան Ֆլավիեն Տետին:

ՊՍԺ-ի մեկնարկային կազմին էին յարձակողներ, արժենթինցի Լիոնել Մեսսին, պրագիլիացի Նեյմարը եւ ֆրանսացի կիլիան Մփապեն: 76-րդ վայրկեանին Նեյմարին փոխարինեց արժենթինցի յարձակող Մաուրիսիօ Լաբորդէն:

ՊՍԺ-ն 24 կէտով կը շարունակէ գլխաւորել մրցաշարային աղիւսակը եւ 6 միաւորի առաւելութիւն ունի երկրորդ տեղը ընթացող «Լանսին» նկատմամբ: «Ռենն» 7-րդն է՝ 12 կէտով:

### Վարազդատ Լալայեանը՝ Ծանրամարտի Եւրոպայի Երիտասարդներու Առաջնութեան Յաղթող



Հայաստանի ծանրամարտի երիտասարդական հաւաքականը նուաճեց նաեւ Ֆինլանդիայի մէջ ընթացող ծանրամարտի Եւրոպայի Մ-20 եւ Մ-23 առաջնութեան վերջին ոսկէ մետալը:

Մինչեւ 23 տարեկաններու գերծանր քաջային կարգի մեր ծանրորդ Վարազդատ Լալայեանը երկամարտի 447 կգ (206+241)արդիւնքով գրաւեց առաջին տեղը եւ հռչակուեցաւ Եւրոպայի ախոյեան: Ան 16 քիլոգրամով գերազանցեցաւ 2-րդ տեղը գրաւած պելաուուսցի էդուարդ Զյազուլինին:

Այդպիսով, Հայաստանի ծանրամարտի պատանեկան եւ երիտասարդական հաւաքականները միասին նուաճեցին 9 ոսկէ մետալ: Այդ ցուցանիշով մեր խումբը ետ մնաց միայն Ռուսաստանի ընտրանիին, որը 10 ոսկէ մետալով կը վերադառնայ հայրենիք: Մետալներու ընդհանուր հաշուարկով Հայաստանը գրաւեց 2-րդ տեղը՝ 15 մետալ (9+3+3):

### Արսէն Յարութիւնեանը Հռչակուեցաւ Ընթացմարտի Աշխարհի Պրոնգէ Մետալակիր

Հայաստանի ազատ ոճի ըմբշամարտի հաւաքականը առաջին մետալը նուաճեց Նորուեկիայի մայրաքաղաք Օսլոյի մէջ ընթացող ըմբշամարտի աշխարհի առաջնութեան ընթացքին:

61 կգ քաջային ըմբիշ Արսէն Յարութիւնեանը 3-րդ տեղի համար մրցամարտի արդէն առաջին ուսունտին 10:0 հաշուով մաքուր յաղթանակ տարաւ հնդիկ Ռավինդէ Ռավինդէրի նկատմամբ: Ան դարձաւ Հայաստանի առաջին պրոնգէ մետալակիրը:



### «Պայրըն» Պարտուեցաւ Միւնիխի Մէջ

Գերմանիոյ առաջնութեան 7-րդ հանգրուանին ախոյեան «Պայրընը» Միւնիխի մէջ մրցեցաւ Ֆրանկֆուրտի «Այնտրախտի» հետ եւ պարտութիւն կրեց 1:2 արդիւնքով:

29-րդ վայրկեանին «Պայրընի» լեհ յարձակող Ռոբերտ Լեւանդովսկիի փոխանցումը օգտագործեց գերմանացի կիսապաշտպան Լէոն Գորեցկան՝ բանալով խաղի հաշիւը:

Արդէն 3 վայրկեան ետք հիւրերը կարողացան վերականգնել հաւասարութիւնը աւստրիացի պաշտպան Մարտին Հինտերեգերի կոլի շնորհիւ: 83-րդ վայրկեանին ֆրանկֆուրտեան խումբի յաղթական կոլը նշանակեց սերպ կիսապաշտպան Ֆիլիփ Կոստիչը:

«Պայրըն» 16 կէտով կը գլխաւորէ մրցաշարային աղիւսակը:

### «Ռեալը» Զիջեցաւ «Էսպանիոլի» Դէմ

Սպանիոյ ֆուտբոլի առաջնութեան 8-րդ հանգրուանին «Ռեալ» արտագնայ խաղին մրցեցաւ «Էսպանիոլի» հետ:

Հանդիպման մեկնարկէն 17 վայրկեան ետք «Ռեալ» իր բերդէն ներս ստացաւ առաջին գնդակը: «Էսպանիոլի» կազմին մէջ աչքի ինկաւ Ռաուլ դէ Թոմասը: Երկրորդ կէսին տան տէրերը նշանակեցին երկրորդ կոլ մը եւս: «Արքայական» ակումբը յաջողեցաւ միայն կրճատել հաշուի տարբերութիւնը, սակայն դուրս եկաւ պարտուած:

Այս պարտութենէն յետոյ ալ «Ռեալ»- Լա Լիգայի մրցաշարային աղիւսակի առաջատարն է եւ ունի 17 կէտ: